ԴԷՊԻ ԱՐՑԱԽ, ԴԷՊԻ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՎԱՀԱԳՆ ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Ներկայացուած յօդուածում ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում է այն էական հանգամանքի գիտակցմանը, որ ներքին տրամաբանութիւնից կտրուած քաղաքական որոշումներով, յայտարարութիւններով երբեք էլ հնարաւոր չէ անկախութեան հասնել։

1988ին «Միացում»-ով սկսուած եւ 1990ին «գնացքից թռչել»-ուն յանգած Ղարաբաղեան շարժման մասին այսօրուայ իշխանութիւնների պաշտօնական կարծիքն այն է, որ Շարժումը ի սկզբանէ սխալ էինք սկսել, բայց այժմ, փառք Աստծոյ, հասկացել ենք, որ պիտի անկախանանք կայսրութիւնից։ «Կը ստրկանանք»՝ «չանկախանանք»։ Ջարմանալիօրէն, չեն փորձում վերլուծել, թէ միութենական նոր դաշնագիրը ընդունա՞ղ է արդեօք ծնելու մի նոր կայսրութիւն, եւ թէ մեր ղեկավարութեան քաղաքականութիւնը տանո՞ւմ է արդեօք մեզ դէպի իրական անկախութիւն։

Եթէ նոյնիսկ բացառուեն ԽՍՀՄ քայքայմանը նպաստող բազմաթիւ մասնաւոր գործօններ, ապա միեւնոյնն է, շուկայական տնտեսութեան անցման, մահմեդական ժողովրդագրական պայթիւնի, Արեւմուտքից տնտեսական կախման, բանակի տրոհման, եւ ժողովուրդների իրարից օտարացման ճանապարհով կայսրութիւնը արագօրէն կը վերածուի չափից դուրս «ինքնիշխան» հանրապետութիւնների մի միութեան, որի ցրուել-չցրուելը շատ էական չի լինի։ Սա լաւ է հասկանում Արեւմուտքը եւ դրանով է պայմանաւորուած նրա վերաբերմունքը հանդէպ Մոսկուայի։

Կայսրութեան փլուզման անխուսափելիութիւնը պարզորոշ հասկանում է եւ Մոսկուան։ Նոր դաշնագրի մասին այս ողջ քաշքշուկը նպատակ ունի ապագայում որքան կարելի է աւելի լաւ մեկնարկային պայմանների մէջ դնել Ռուսաստանը, շրջապատել այն իրենից որքան կարելի է շատ կախուած՝ «ձեռնտու» հարեւաններով։ Ռուսները պիտի ջանան չկորցնել Հիւսիսային Ղազախստանը եւ պահպանել սլաւոնական մեծ եռեակը (որոշ վերապահութիւններով դա ձեռնտու է նաեւ Ուկրաինային ու Բելոռուսիային)։

Իսկ ի՞նչ խնդիրներ ունեն միւս ազգերը, որոնք իրենք չեն ձեւաւորում մեծ քաղաքականութիւնը, սակայն շահագրգռուած են դրանում։

Մերձբալթիկան չի կարող հանգիստ սպասել կայսրութեան փլուզմանը։ Եթէ նա չսկսէր ակտիւօրէն պայքարել 88ից ի վեր, ապա արդէն իսկ Լատուիայում ու Էստոնիայում ռուսալեզուները դարձած կը լինէին բնակչութեան մեծամասնութիւնը, պրոցեսը շեշտակի կը զարգանար առաջիկայ տարիներին ու այդ հանրապետութիւնները ի վերջոյ եւրոպական տուն կը մտնէին՝ ունենալով 65-75 տոկոս ոչ արմատական բնակչութիւն, որը նրանց միանգամայն «դեմոկրատական» միջոցներով կախման մէջ կը դնէր Ռուսաստանից։ Վրաստանը եւս չի կարող սպասել առանց Մոսկուայի դէմ ակտիւ պայքար մղելու։ Ռուսաստանը, իրեն անհրաժեշտ հարեւաններ պատրաստելու ճանապարհին, կարող է «օգնել», որ ստեղծուեն անկախ Աբխազիա եւ Օսեթիա։ Մինչդեռ մուսուլմանական հանրապետութիւնները չունեն Մոսկուային նուիրուած ազգային փոքրամասնութիւններ (չհաշուած Հիւսիսային Ղազախստանի իւրայատուկ խնդիրը)։ Կենտրոնը նրանց վրայ ազդում է տնտեսական թերզարգացածութեան տրամադրած լծակներով։ Դրա համար էլ այդ հանրապետութիւնները ակտիւօրէն աշխատում են վերացնել իրենց տնտեսական բացերը։ Եւ դա կարեւոր քայլ է դէպի իրենց անկախութիւնը, աւելի կարեւոր, քան աշխարհով մէկ անկախական յայտարարութիւններ անելը։ Ադրբեջանի դէպքում աւելանում է Արցախի «կնճիռ»-ը։ Ղարաբաղի հնարաւոր հայաթափութիւնը կնարազացնի Ադրբեջանի դէպի անկախութեան շարժման ընթացքը։

Դառնանք Հայաստանին։ Սխալ է այն միտքը, թէ մեր անկախութիւնը կախուած է միայն Մոսկուայից։ Մեր անկախութիւնը քայլ առ քայլ, մաս առ մաս պիտի նուաճուի զանազան «երկրորդ» ու «երրորդ» ուժերից։ Կայսրութիւնը կը փլուի անկախ մեր ջանքերից ու մեր անկախութեան «մոսկովեան» բաժինը կը ստանանք վաղ թէ ուշ, իսկ միւս ուժերից ինքներս պիտի գլուխ հանենք։

Շար. էջ 15 →

ԴԷՊԻ ԱՐՑԱԽ, ԴԷՊԻ ԻՐԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

← Սկիզբը՝ էջ 3

Մերձբալթիկայի կամ Վրաստանի հակամոսկովեան կեցուածքը թելադրում է այդ հանրապետութիւնների լուծուելիք խնդիրներով: Անկախական որոշումներով ու յայտարարութիւններով երբեք չենք կարող փոխարինել անկախ լինելու կարգավիճակը: Մեր ղեկավարութեան այսօրուայ դիրքը արդիւնք է աւելի շատ միւս «ըմբոստ» հանրապետութիւններին նմանուելու ձգտման, քան անկախութեան Հայաստանի ճանապարհի իւրայատկութիւններին:

Հայաստանը միակ հանրապետութիւնն է, որ «Արցախ» ունի: Միութեան կազմում մնալու վերջին տարիները պիտի օգտագործուեն Արցախը որքան հնարաւոր է ամրացնելու համար: Սակայն «ի փառս դեմոկրատիա»-ի՝ Մոսկուային մինչեւ վերջերս հակադրուող մեր ղեկավարները բարձիթողի վիճակում էին թողել Արցախը: Յանուն «անկախութեան» Արցախից հրաժարուելով, միեւնոյն է, չենք դադարի մեր ծոծրակին զգալ Մոսկուայի ծանր շունչը...

Հայաստանը միակ հանրապետութիւնն է, որի անկախութիւնը եապէս կապուած է այն պաշտպանելու ընդունակութեան հետ: Արդէն իսկ չկան մի տարի առաջուայ աշխարհազօրային խմբերը:

Հայաստանը միակ հանրապետութիւնն է, որին կարող է սպառնալ լրիւ շրջափակումը հաղորդակցութեան ոչ միայն արտաքին, այլեւ որոշ ներքին ուղիներում (Մեղրի, Կապան): Նոր ցամաքային եւ օդային գծերի զարգացումը պիտի համարել դէպի անկախութիւն տանող քայլ, սակայն դարձեալ ոչինչ չի արտա, չհաշուած «դեմոկրատ» Թուրքիայի ուղղութեամբ արուող բոլորովին այլ տիպի «քայլեր»-ը:

Հայաստանը միակն է, որ ունի իր դէմ ցեղասպանութիւն իրագործած մի հարեւան: Առաջիկայ տարիները պիտի օգտագործել Հայ Դատը միութենական խողովակով առաջ տանելու համար: Այս դէպքում՝ արտում է ասուածի ճիշտ հակառակը: Փորձում են Թուրքիայի բարեկամութիւնը շահել, ելնելով միայն որոշ «նոր մտածողութիւն ունեցող» թուրքերի մեղրածոր ներողամտութիւնից: Քաղաքականութիւնը բխում է շահերից, իսկ թուրքերի շահերը մենք չենք որոշում:

Այս խնդիրներն են, որ աղէտի գօտու, տնտեսական զարգացման եւ այլ հարցերի հետ միասին պիտի անպայման լուծուեն մեր անկախութեան ճանապարհին: Սակայն չեն լուծում, ընդ որում՝ նոյնիսկ այն հարցերը, որոնք կապուած են ոչ թէ Արցախի կամ Հայ Դատի, այլ «զուտ անկախութեան» հետ: Մերձբալթեան ժողովրդական ճակատների ձեւը եւ համամիութենական «դեմոկրատական» բովանդակութիւնը ունեցող ՀՀՇն «անկախութեան ու դեմոկրատիա»-յի համամիութենական պայքարում միւսներից յետ չմնալու համար «Ղարաբա՞ղ, թէ՞ անկախութիւն» մտացածին երկընտրանքից «ընտրեց անկախութիւն»-ը: Սակայն բանն այն է, որ ՀՀՇն չջանաց ըմբռնել, թէ որն է անկախութեան մեր ճանապարհը, այլ պարզապէս փոխառաւ մերձբալթեան տարբերակը: Այդ «սառը» ու «իրատեսական» քաղաքականութեան հետեւանքով է, որ անտեսուեցին ոչ միայն Արցախը, այլեւ «զուտ անկախական» շատ կարեւոր հարցեր (չէ՞ որ Լատուիան իր անկախութեան ճանապարհին կարիք չունի ո՛չ նշանակալի բանակ ստեղծելու, ո՛չ էլ նոր ճանապարհներ կառուցելու): Այսօր հայ ազգի դէմ ցեղասպանութիւն է իրականացուում, ամբողջ գիւղեր են հայաթափուում, իսկ մեր ղեկավարութիւնը չի ուզում բաց թողնել «անկախութեան» իր օտարամուտ մոդելը: Միութենական դաշնագիրը բոլորովին էլ վախճանի մի սահմանագիծ չէ Հայաստանի համար: Սակայն այսօր իրավիճակը ներկայացուում է հենց այդ լոյսով («ստրկանա՞նք, թէ՞ չստրկանանք» բովանդակութեամբ): Հայրենի ղեկավարութեան անհանգստութիւնը հասկանալի է, քանի որ նոր դաշնագիրը վերջնագիծ չլինելով հայութեան համար, միաժամանակ, վերջնագիծ է ՀՀՇի իշխանութեան համար, որը, հրաժարուելով Արցախից, չկատարելով տնտեսական խոստումները, մոռանալով թմբկահարուած բնապահպանական ծրագրերը, այդ ամենը բացատրում էր «անկախութեան» պայքարով ու Մոսկուայի դաւերով: Հայ ազգը պիտի թողնի ամեն զընով «ըմբոստ հանրապետութիւններ»-ի խմբակին անդամակցելը եւ պիտի վերադառնայ իր ղարաբաղեան պաքարին, ի՛ր անկախութեան կառուցմանը: Իսկ կարո՞ղ է նոյն բանը անել ՀՀՇն: Ոչ, ընդ որում գաղափարների նկատմամբ հաւատարմութիւնը չէ, որ նրան յետ է պահում նման քայլից: Պարզապէս, եթէ նոյնիսկ հայրենի ղեկավարութիւնը անի անսպասելին՝ դառնայ դէպի Արցախը, ապա միեւնոյնն է, դա ՀՀՇին չի վերադարձնի քաղաքականութեան էպիկենտրոնը: Այսինքն՝ իշխանութեան պահպանման հարց կայ ասպարէզի վրայ: Դրա համար էլ ՀՀՇն գրաւել է անկախութիւնը պաշտպանողի դիրք, իսկ «տատանուողներ»-ին անընդհատ պախարակում է «ստրկութեան» ձգտելու մեղադրանքով: Հայաստանը հիմա չափազանց վտանգաւոր մի կացութեան մէջ է, եւ բանը միայն Շահումեանի ու Հադրութի դրրութիւնը չէ: Վերջին տարիուկէսը մենք միայն խօսում էինք անկախութեան մասին եւ համարեա ոչինչ չէինք անում անկախութեան ուղղութեամբ: Այժմ Ադրբեջանը կարող է առանց մեր անատամ «անկախութիւն»-ից մազաչափ իսկ զգուշանալու ճնշել Ղարաբաղը: Ջրեղ մի բանակ եւ անշրջափակելի տնտեսութիւն ունենալու նախաշեմին գտնուող մեր հարեւանը, վստահաբար, աւելի մօտ է իրական անկախութեանը, քան մենք: Այսօր դժուար է անգամ պատկերացնել, թէ Հայաստանը ի՞նչ ուժերով պիտի դիմագրաւի 4րդ բանակին ու ազերի ՕՄՕՆին հնարաւոր խոշորամասշտաբ բախման դէպքում: Միաժամանակ օր-օրի հալում է 7րդ «գաղութարար» բանակը. կանոնաւոր զօրակոչ չկայ, դուրս է տարում եղած տեխնիկան:

«Այս 30 հզ. քառ. կմ-ը պահելու» «հողակտորի քաղաքականութիւն»-ը այսօր զուգակցում է միմիայն «հայաստանցու» մասնատր շահերը հետապնդող եւ մնացած հայութիւնը «արտասահմանցի» որակող քաղաքականութեամբ: Սակայն մենք տաս միլիոն ենք. Թուրքիայի ու Ադրբեջանի միջեւ խցկուած մի «ազգաբնակութիւն» չենք, ինչպէս կարծում են շափից դուրս «պետական» մտածողութիւն ունեցողներից ոմանք: Ազգը պիտի տէր կանգնի իր Արցախին: Ազգը յոգնած չէ: Մեզ յոգնած են համարում նրանք, ում ձեռնտու է դա: Սակայն հիասթափութիւնը ոմանց նկատմամբ, դեռ չի նշանակում յոգնածութիւն ամեն ինչում: Հայ ազգը միասնական ջանքերով պիտի վերջ տայ մեզ «անկախութեան» անունով դէպի նոր ցեղասպանութիւն ու տարածքային կորուստներ տանող անխոհեմ քաղաքականութեանը: Պիտի անյապաղ դառնալ դէպի Արցախը, դէպի իրական անկախութեան կառուցումը եւ յետ շահել անհոգութեամբ կորսուած թանկարժէք ժամանակը: